



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-12-Ո-15
2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԳԱԼՈՒՍՏ ԱՎԵՏԻՔԻ ԴԱՐԻՔՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՔԸ ԼՐԱՆԱԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

նախագահությամբ՝

Ա. Մկրտումյանի

մասնակցությամբ ԱԽ անդամներ՝

*Ա. Բաբայանի, Ռ. Բարսեղյանի,
Գ. Խանդանյանի, Ա. Խաչատրյանի,
Մ. Հարթենյանի, Գ. Ղազինյանի,
Ե. Սողոմոնյանի, Վ. Ստեփանյանի,
Հ. Փանոսյանի, Ս. Օհանյանի*

քարտուղարությամբ՝

Շ. Վարդանյանի

2017 թվականի սեպտեմբերի 15-ին քաղաք Երևանում՝ Արդարադատության խորհրդի նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավոր Գալուստ Ավետիքի Ղարիբյանի լիազորությունները՝ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ դադարեցնելու վերաբերյալ հարցը, և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով, 4-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

Առաջարկել Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ 2017 թվականի սեպտեմբերի 23-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավոր Գալուստ Ավետիքի Ղարիբյանի լիազորությունները՝ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ